Երկարաժամկետ ընտրական աջակցություն Հայաստանում
ընտրությունների հետ առնչվող շահագրգիռ կողմերին

Ընտրությունների միջազգային չափանիշների և դիտորդության դասընթացավարի մրցույթի հայտարարություն

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը և Եվրոպայի խորհուրդը տեղական դիտորդական կազմակերպությունների կարողությունների զարգացման նպատակով կազմակերպում են դասընթացավարների վերապատրաստում՝ ընտրությունների կազմակերպման միջազգային չափանիշների, դիտորդական առաքելությունների զեկույցների պատրաստման և ՀՀ նոր ընտրական օրենսգրքի կարգավորումներով դիտորդական առաքելություն իրականացնելու վերաբերյալ: Սույն դասընթացի իրականացման համար ընդունվում են դասընթացավարների հայտեր:

Դասընթացավար 1
Թեմա. **Ընտրությունների վերաբերյալ միջազգային չափանիշներ և դիտորդական առաքելությունների զեկույցների պատրաստում**

Առաջադրանք

1. Պատրաստել դասընթացի մոդուլ հիմնված Ընտրությունների միջազգային չափանիշների[1] և Ընտրությունների վերաբերյալ զեկույցների պատրաստման[2] ԵԽ ձեռնարկների վրա
2. Իրականացնել երկօրյա դասընթաց 25 մասնակիցների համար

Անհրաժեշտ որակավորում

1. Դասընթացների անցկացման 3 տարվա փորձ
2. Միջազգային դիտորդական առաքելությունների հետ աշխատանքի փորձ
3. Դիտորդական առաքելությունների զեկույցների պատրաստման փորձ

Դասընթացավար 2
Թեմա. **Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դիտարկում**

Առաջադրանք

1. Պատրաստել դասընթացի մոդուլ հիմնված ՀՀ 2011թ.[3] և ՀՀ 2016 թ.[4] ընտրական օրենսգրքերի և ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ու Քաղաքացի դիտորդ նախաձեռնության դիտարկման գործիքների հիման վրա
2. Իրականացնել երկօրյա դասընթաց 25 մասնակիցների համար

---

[1] https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680597989
[2] https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168059719c
[3] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=106020
[4] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=105967

Անհրաժեշտ որակավորում

1. Դասընթացների անցկացման 3 տարվա փորձ
2. Դիտորդական առաքելության իրականացման և համակարգման փորձ

Ժամկետներ՝

Հունիսի 17- Հայտերի ընդունման վերջնաժամկետ
Հունիսի 20- Մրցույթի արդյունքների վերաբերյալ իրազեկում
Հուլիսի 4 – Դասընթացի մոդուլի պատրաստում
Հուլիսի 7-10 – Դասընթացի իրականացում

Հետաքրքրված Դասընթացավարները պետք է ներկայացնեն՝

1. Հետաքրքրության նամակ՝ ընդգծելով համապատասխան փորձառությունը
2. Աշխատանքային ինքնակենսագրական
3. Երկօրյա դասընթացի նախնական կառուցվածք
4. Երկու երաշխավորողի կոնտակտային տվյալներ

Հայտերը խնդրում ենք ուղարկել hcav@hcav.am հասցեով՝ նամակի թեմայում նշելով «Դասընթացավարների վերապատրաստում» մինչև հունիսի 17-ը՝ ժամը 17:00:

Հարցերի դեպքում կարող եք դիմել ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, Վարդինե Գրիգորյանին՝

Հեռ. 0322 72268, 077342268, կամ գրել վերոնշյալ հասցեով: